

real world
real people

«ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ» ՍՀԿ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2025

www.realwrp.org

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2025թ.-ի ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	5551
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	7233
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	562
Իրավաբանի կողմից տրամադրված ծառայություն	223
Փոխօգնության խմբեր	190
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՀՀ	593
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՌԴ	395
Նախկինում ՀՌՎ բուժման դադար ունեցած և այժմ բուժմանը կցված	120

www.realwrp.org



«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից, «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակում 2025թ.-ի տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Մատուցված ծառայություններ	12636
Ծառայություններ ստացած անձինք	6477
Թեստավորում անցած անձինք	6450
Բացահայտված ՄԻԱՎ դրական դեպքեր	39
Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ուղեգրված ՄԻԱՎ դրական դեպքեր	30

www.realwrp.org



«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «Տուբերկուլոզ ունեցող անձանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2025թ.-ի ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	284
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	291
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	223
ԹԱԿ-ից և պոլիկլինիկաներից մեզ ուղեգրված անձինք	310
Մեր կողմից ծառայություններ ստացած անձինք	291
Փոխօգնության խմբեր	28

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Հունվարի 29

Հունվարի 29-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ում անցկացվեց հերթական մասնագիտական զարգացման դասընթացը:
Այս անգամ քննարկման թեման տուբերկուլոզն էր: Թոքաբանության Ազգային կենտրոնի մասնագետներ՝ թոքախտաբան Հակոբ Աճեմյանն ու հոգեբան Մանե Բաղդասարյանը, ներկայացրին ՏԲ-ի բուժման արդի մեթոդները, մարտահրավերներն ու նորարարական մոտեցումները:

Հունվարի 24-25

Հունվարի 24-25-ը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպությունը՝ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի (UNAIDS) աջակցությամբ, կազմակերպեց ճամբար ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, դեռահասների և նրանց ծնողների համար:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Փետրվարի 6-8

Փետրվարի 6-8-ը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության թիմը հավաքվել էր Աղվերանում՝ տարին ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Հանդիպման ընթացքում վերանայվեցին կազմակերպության ռազմավարությունը, գործողությունների պլանը և մշակվեցին նոր մոտեցումներ՝ ծրագրային թիրախներին առավել արդյունավետ հասնելու համար:

Փետրվարի 28

Փետրվարի 28-ին՝ ՄԻԱՎ-ի քրեականացման վերաբերյալ իրազեկման միջազգային օրը, «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ն ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում կազմակերպեց կլոր սեղան-քննարկում՝ գործընկեր կառույցների, քաղաքացիական հասարակության, իրավապաշտպանների և ոլորտի մասնագետների մասնակցությամբ:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Մայիսի 7

Մայիսի 7-ին ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈւԽ անդամները այցելեցին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ: Գործադիր տնօրեն Նաիրուհի Սաֆարյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի ոլորտի խնդիրներն ու առաջընթացը՝ ընդգծելով սոցիալական աշխատողների դերը: Ուսանողները նաև ծանոթացան կազմակերպության աշխատանքին ու ծրագրերին:

Մայիսի 18

Մայիսի 18-ին ԹՈՒՄՈ-ի այգում անցկացվեց ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակին նվիրված միջոցառում: Մասնակիցները պատրաստեցին հիշատակի **quilt**, կազմեցին կարմիր թելից շրջան՝ որպես համերաշխության խորհրդանիշ: Մոտ 30 կամավոր անցորդներին բաժանեցին ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Վերջում մոմավառությամբ հարգանքի տուրք մատուցվեց մահացածներին:
Այս օրը դարձավ հիշատակի, ուժի և պայքարի խորհրդանիշ:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Հոկտեմբերի 6

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի նախագահ Ժենյա Մայիլյանը կազմակերպության թիմի համար անցկացրեց դասընթաց՝ նվիրված բուժաշխատողների և գործընկերային էթիկային:

Սեպտեմբերի 22, Հոկտեմբերի 15

Սեպտեմբեր **22**-ին և հոկտեմբերի **15**-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ը իրականացրեց դասընթաց թմրամիջոցներ օգտագործող անձանց համար՝ նվիրված **Community Lead Monitoring** (համայնքային մշտադիտարկում) թեմային, որը վարում էր ԻԱԻՄ ՍՀԿ-ն գործադիր տնօրեն Նաիրուհի Սաֆարյանը:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Հոկտեմբերի 18

ՏԲ կաբինետների բուժքույրերի վերապատրաստման շարունակական դասընթացների շրջանակում հոկտեմբերի 18-ին Երևանում անցկացվեց հերթական դասընթացը՝ նվիրված տուբերկուլոզ ունեցող պացիենտների հետ աշխատանքի առանձնահատկություններին և խորհրդատվական հմտությունների զարգացմանը:

Հոկտեմբերի 22, 23

Հոկտեմբերի 22-ին և 23-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ում հյուրընկալեցինք Արարատի պետական բժշկական քոլեջի ուսանողներին: Երկօրյա դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների գիտելիքներն ու հմտությունները ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցության վերաբերյալ, ինչպես նաև փոխանցել կարևոր տեղեկատվություն ԹՆՕ անձանց և Տուբերկուլոզ (ՏԲ) ունեցող մարդկանց հետ աշխատանքի մասին:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Նոյեմբերի 1

ՏԲ կաբինետների բուժքույրերի վերապատրաստման շարունակական նոյեմբերի 1-ին անցկացվեց հերթական դասընթացը՝ նվիրված տուբերկուլոզ ունեցող պացիենտների հետ աշխատանքի առանձնահատկություններին և խորհրդատվական հմտությունների զարգացմանը: Այս անգամ մասնակցեց Սյունիքի մարզի և Վայոց Ձորի մարզի պոլիկլինիկաներում գործող ՏԲ կաբինետների բուժքույրեր:

Նոյեմբերի 10

ՏԲ կաբինետների բուժքույրերի վերապատրաստման շարունակական նոյեմբերի 10-ին Լոռու մարզում անցկացվեց հերթական դասընթացը՝ նվիրված տուբերկուլոզ ունեցող պացիենտների հետ աշխատանքի առանձնահատկություններին և խորհրդատվական հմտությունների զարգացմանը:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Նոյեմբերի 13

ՏԲ կաբինետների բուժքույրերի վերապատրաստման շարունակական դասընթացների շրջանակում նոյեմբերի 13-ին անցկացվեց վերջին դասընթացը՝ նվիրված տուբերկուլոզ ունեցող պացիենտների հետ աշխատանքի առանձնահատկություններին և խորհրդատվական հմտությունների զարգացմանը:

Նոյեմբերի 20

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան ընդառաջ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպությունը նոյեմբերի 20-ին իրականացրեց աշխատարան լրագրողների համար:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Դեկտեմբերի 1

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում՝ դեկտեմբերի 1-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ը նախաձեռնել է յուրօրինակ միջոցառում, որը հնարավարություն տվեց ցանկացողներին ծանոթանալ ՄԻԱՎ-ով ապրող մարդու հետ՝ լսել, հարցեր ուղղել, զրուցել և բացահայտել նրան։

Դեկտեմբերի 9

Կանխարգելման կարևորությունն ու անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա միջոցառումների շրջանակում «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ը և Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 ավագ դպրոցը նախաձեռնել էին դասընթաց ավագ դպրոցի ավարտական դասարանների աշակերտների համար:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Ապրիլի 2

Ապրիլի 2-ին ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնում պաշտոնական այցով գտնվող Եվրոպական Միության Թմրամիջոցների գործակալության (EUDA) ներկայացուցիչները հանդիպեցին կենտրոնի և գործընկեր կազմակերպությունների հետ: Քննարկվեցին թմրամիջոցների տարածվածության միտումները, իրականացվող բարեփոխումները և վնասի նվազեցման ծրագրերը: Կողմերը պայմանավորվեցին շարունակել արդյունավետ համագործակցությունը:

Ապրիլի 16

Ապրիլի 16-ին Գյումրիում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան իրականացրեց «Արի միացրու՛ քո լույսը» և «Արի կարենք պատմության քո պատառը» միջոցառումները: Նպատակն էր բարձրացնել գենդերային բռնության վերաբերյալ իրազեկվածությունը, խթանել համերաշխությունն ու աջակցությունը բռնություն վերապրածներին: Միջոցառմանը մասնակցեցին նաև ԻԱԻՄ ՍՀԿ-ի անդամները:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Ապրիլի 30

Ապրիլի 30-ին կայացավ «Հակազդելով անհավասարությանը. պայքար գենդերային բռնության և խտրականության դեմ» համաժողովը, որն ամփոփեց «Կանանց և աղջիկների համար բռնությունից զերծ կյանքի» ծրագրի արդյունքները: Միջոցառման պանելային քննարկումներից մեկին՝ որպես խոսնակ, մասնակցեց նաև ԻԱԻՄ ՍՀԿ նախագահ Ժենյա Մայիլյանը:

Դեկտեմբերի 11, 12

Դեկտեմբերի 11-ին և 12-ին, «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ գրասենյակում անցկացվեց տարածաշրջանային փոխանակման ծրագրի երկրորդ փուլը՝ Վրաստանի գործընկեր կազմակերպությունների՝ **New Vector** և **Mandala**, ինչպես նաև **Médecins du Monde (MdM)** ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Հոկտեմբերի 15

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի թիմը՝ մոնիթորինգի մասնագետ Արմինե Հարությունյանը, աութրիչ աշխատակիցների համակարգող Սարգիս Ավետիսյանը և համայնքային երկու աշխատակից, Աշխարհի Բժիշկներ Կազմակերպության աջակցությամբ Վրաստանում մասնակցեցին հերթական միջոցառմանը, որին ներկա էին նաև մի շարք գործընկերներ՝ **GeNPUD**, **Mandala**, **New Vector**, **Step to the Future**, **Hepa+** կազմակերպություններից:

Նոյեմբերի 27

Նոյեմբերի **27**-ին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և **BIL Armenia**-ի համագործակցությամբ տեղի ունեցավ «Վարքագծային սովորությունների ազդեցությունը հանրային առողջության վրա» համաժողովը: Համաժողովին մասնակցում էր նաեւ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ն նախագահ Ժենյա Մայիլյանը:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Դեկտեմբերի 5

Դեկտեմբերի 8-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ում հյուրընկալեցինք մեր գործընկերներին «Երեխաների պաշտպանության ցանց»-ից: Այս հանդիպումը կարևոր հնարավորություն էր մի կողմից ներկայացնելու ԻԱԻՄ ՍՀԿ-ն ծառայությունները, թիմի մասնագիտական ներուժը և մեր աշխատանքի առավել կարևոր առանձնահատկությունները, իսկ մյուս կողմից՝ քննարկելու համատեղ հնարավոր նախաձեռնություններն ու համագործակցության նոր ուղղությունները:

Դեկտեմբերի 18, 19

Դեկտեմբերի 18–19-ին Աշխարհի բժիշկներ կազմակերպության հայաստանյան գրասենյակի և Իրական Աշխարհ Իրական Մարդիկ ՍՀԿ-ի կողմից անցկացվեց «Հեպատիտ Ց-ի բուժման պրոտոկոլների հեշտացում» ծրագրի տարեկան ամփոփիչ հանդիպումը, որը միավորեց ծրագրի համակարգողներին, բժիշկներին, բուժքույրերին, հետազոտողներին և դաշտային աշխատակիցներին՝ 2025 թվականի աշխատանքի արդյունքները գնահատելու և առաջիկա քայլերը համատեղ պլանավորելու նպատակով:

ԶԼՄ-ների անդրադարձը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործունեությանն ու միջոցառումներին

FACTOR.AM

Հոկտեմբերի 6-ին մեր ԻԱԻՄ ՍՀԿ-ի նախագահ Ժենյա Մայիլյանը Factor TV-ի տաղավարում էր, մասնակցելու՝ «Ինչո՞ւ են Հայաստանում թմրանյութերը դարձել մատչելի և հասանելի եւ ինչպես կանխել ահագնացող վտանգը» թեմայով քննարկմանը:

SHANT GYUMRI

Հոկտեմբերի 4-ին ԻԱԻՄ ՍՀԿ-ի նախագահ Ժենյա Մայիլյանն ու իրավաբան Վաղինակ Տեր-Հովհաննիսյանը Շանթ Գյումրի ՀԸ-ն հյուրն էին, խոսելու՝ Կյանք առանց ցավի ծրագրի մասին:

ARMRADIO.AM

Հոկտեմբերի 9-ին ԻԱԻՄ ՍՀԿ-ի իրավաբան Վաղինակ Տեր-Հովհաննիսյանը Հանրային Ռադիոյի հյուրն էր, խոսելու՝ Կյանք առանց ցավի ծրագրի մասին:

ԶԼՄ-ների անդրադարձը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործունեությանն ու միջոցառումներին

A1PLUS.AM

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից իրականացվող «Թմրամիջոց գործածող անձանց շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում» ծրագրի առաջնորդ աշխատակիցների համակարգող Սարգիս Ավետիսյանը A1plus-ի հյուրն էր: Քննարկման թեման էր՝ Հայաստանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության ծավալները և մարտահրավերները:

ԲՈՒՆ TV

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվա շրջանակում «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ նախագահ Ժենյա Մայիլյանը հյուրընկալվել է Բուն TV՝«Բուն զրույց» հաղորդաշարի շրջանակում զրուցելու Հայարփի Սահակյանի հետ:

1LURER.AM

Լուրերի անդրադարձը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան:

real world
real people

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ

+374 98 66 33 83

info@realwrp.com

www.realwrp.org